«Անծանոթ էջերը», 1974 թ.) հատորները։ Մամուլի տակ է VIII հատորը («Ժամանակակիցների հուշերը հայ դասական գրողների մասին»)։ Այս տարի, Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակի առթիվ լույս կընծայվի նրա «Հիշատակարանը», որը կկազմի այդ մատենաշարի IX հատորը։

Գ. ՄԱՂԱԼՅԱՆ

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՏԱՆԶԱՎԵՐ ԵՎ ՇԻԿԱՀՈՂ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

Զանգեզուրի բրոնզեդարյան հուշարձանների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի Հայաստանի հարավ-արևելյան մասի նախնադարյան ժամանակաշրջանի մշակույթը հետազոտելու համար։ Հանդիսանալով Հայկական լեռնաշխարհի լոկալ մշակութային օջախներից մեկը, Զանգեզուրը միաժամանակ սերտ շփման մեջ է եղել Մալիշ-Իրանական աշխարհի հետ։ Այս առումով Զանգեզուրի նորահայտ հուշարձանները մի կողմից լրացնում են Հայաստանի մշակույթի չուսումնասիրված օղակներից մեկը, մյուս կողմից՝ շեշտում նրա արտաքին կապերը հարևան երկրների հետ։ Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում 1974 թ. Ղափանի շրջանի Տանձավեր և Շիկահող գյուղերում կատարված պեղումները, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև։

Ժամանակագրական տեսակետից ամենավաղ հուշարձանը Տանձավեր գյուղի արևմտյան մասում գտնվող, մ. թ. ա. III հազարամյակի դամբարան-քարայրն է։ Դժբախտաբար այդ յուրօրինակ հուշարձանը ավերված է, նրա պարունակած խեցեղենը ջարդոտվել ու դուրս է նետվել քարայրի հրապարակը։ Տեղում հավաքված նյութը ներկայացված է սև փայլեցրած կամ արծաթագույն մակերեսով ու կարմիր աստառով բրեղանների ու գավաթների չամրոջացող մասերով։ Բրեղաններն (աղ. I, նկ. 1, 2, 4) ունեն դուրս ճկված թևք շուրթեր, իրանի սահուն անցումներ, որը վաղ բրոնզեդարյան խեցեղենի էլարյան խմբի բնորոշ գծերից է։ Նույն հատկանիշներով են բնորոշվում նաև գավաթները (հայտնաբերված է երկու բեկոր)։ Դրանք բարձր, կենտրոնական մասում թեթևվակի ուռուցիկությամբ, ուղիղ վզիկ ու դուրս թեքվող շուրթ ունեցող անոթներ են, որոնց իրանները փորը-ին՝ ձգված են ու բարձրադիր (աղ. I, նկ. 3)։ Հարթակից հավաքված վերջին նյութը աղեղնաձև կանթի բեկորն է (աղ. I, նկ. 5)։

Խոսելով էլարյան տիպի խեցեղենի մասին, հարկ է նկատել, որ այն հսկայական տարածք է ընդգրկում, հասնելով հարավում մինչև իրանական Ադրբեջան։ Համեմատական նյութի այսպիսի առատությունը և նմանությունը ցույց է տալիս, որ Զանգեզուրի այս հատվածը նույնպես հանդիսացել է Հայկական լեռնաշխարհի մշակույթի միասնական շրջաններից մեկը։ Այդ է վկայում և Տորիսի շրջանի խոզնավար գյուղից հայտնաբերված ամբողջական գավաթը, որը ոչնչով չի տարբերվում տանձավերյան բեկորներից և նույնությամբ կրկնում է Կամոյից, Էլարից և Հայաստանի այլ վայրերից հայտնաբերվածներին[1]։ Հարկ է նկատել սակայն, որ այդ մշակույթը վաղ բրոնզեդարյան հուշարձանների տարբեր շերտերում է հանդիպում և հետևաբար տարբեր ժամանակներով է թվագրվում (մ. թ. ա. IV հազ. վերջ և III հազ.)[2], որը և թույլ չի տալիս Տանձավերից պատահականորեն հայտնաբերված նյութերը ստույգ կերպով թվագրել։ Այս հանգամանքը ստիպում է մեզ այդ նյութերը ընդհանուր կերպով թվագրել մ. թ. ա. III հազարամյակով։

Ավելի ուշ ժամանակաշրջանի են պատկանում Տանձավեր գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք գտնվող «Միջակ արտ» կոչվող վայրի դամբարանադաշտի մի դամբարանթմբից (տրամագիծը՝ 7.80 մ, բարձր.՝ 1.90 մ) հայտնաբերված նյութերը։ Դամբարանթումբը ծածկում էր վերերկրային տիպի քարարկղային դամբարանը (աղ. I, նկ. 6 ա), որն ուղղված էր արևելքից-արևմուտք (երկար.՝ 4.10 մ, բարձր.՝ 1.80 մ, լայն.՝ 1.60 մ)։ Կմախքը, որ պատկանում էր երկարագանգ, մոտ 45 տարեկան տղամարդու, գտնվում էր դամբարանի արևմտյան մասում, դրված էր աջ կողքի վրա, ծալած վերջավորություններով։ Նրա ստորին ծնոտը գտնվեց ոտքերի մոտ։ Դամբարանում հայտնաբերված նյութերը հիմնականում ներկայացնում են խեցեղեն առարկաներ, որոնք տեղադրված էին քարարկղի արևելյան և արևմտյան

---

1 Է. Վ. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 76—77, նկ. 14, աղ. X, նկ. 3—4, աղ. XIV, նկ. 2, աղ. XXIV։

2 Մանրամասնությունները տե՛ս К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа. Л., 1970, էջ 178—184։

մասերում (աղ. I, նկ. 6 ր) և պատկանում էին հետևյալ տիպերին.

ՍԿԱՀԱԿՆԵՐ.— Դուրգի վրա պատրաստված, թեթևակի փայլեցրած, սև գույնի, գույգ կանթերով և իրանի վերին մասում ռելիեֆ ծալազարդեր ունեցող անոթներ են, որոնք ունեն նրբագեղ ոտիկներ։ Դրանցից մեկի (աղ. II, նկ. 1) աղեղնաձև կանթերը տափակ են և արտաքինից զարդարված են վերից վար անցնող երեքական ռելիեֆ գծերով։ Անոթի վզիկը բարձր է և ուղիղ, իսկ իրանն ունի երկկոն տեսք։ Հատած կոնի ձևով սկահակի ոտքը սեղմված է և արտաքինից զարդարված է ռելիեֆ գծանախշերով։ Ի տարբերություն սրա, մյուսի ոտքը, սեղմված լինելով հանդերձ, ունի հարթ հատակ, իսկ իրանը՝ թեթև գնդաձևություն։ Նրա վերին մասը նույնպես զարդարված է ռելիեֆ ծալքագծերով, որոնք անոթի մակերևսին ալիքաձև տեսք են տալիս։ Կանթերը կտրրվածքում շրջանաձև են, արտաքինից ալիքաձև տեսք ունեն։ Սկահակին լրացուցիչ գեղեցկություն են հաղորդում փորագիր զարդագծերը, որոնք գոտևորում են իրանի կենտրոնը և ոտքի հիմքամասը (աղ. II, նկ. 2)։

ԿԾՈՒԾՆԵՐ.— Ներկայացված են մի քանի տարբերակով։ Դրանցից առաջին տարբերակին պատկանողները (երկու օրինակ) բարձր, ուղիղ վզով, գնդաձև իրանով և հարթ հատակով անոթներ են, որոնք ուղիղ ուսերի վրա ունեն աղեղնաձև գույգ փոքր կանթեր։ Վերջիններս անոթներին են միացված հորիզոնի նկատմամբ փոքր անկյան տակ։ Սրանց վզերը զարդարված են թույլ ռելիեֆ զարդագոտիներով, իսկ իրանը՝ փայլեցման եղանակով արված ուղղահայաց զարդագծերով (աղ. II, նկ. 3)։ Նույն կառուցվածքն ունի և երկրորդ տարբերակին պատկանողը, սակայն սա զուրկ է կանթերից, իսկ ռելիեֆ ծալքագոտիները զարդարում են իրանի վերին մասը։ Նախորդների նման սրանք ևս թեթևակի փայլեցրած, սև գույնի անոթներ են (աղ. II, նկ. 4)։ Երրորդ տարբերակին պատկանողները (երեք հատ) հանդիսանալով ձեռքի կոպիտ աշխատանքի արդյունք, գորշ են ու մոխրագույն։ Կանթերից ու զարդերից զուրկ մրապատ գնդաձև իրանները ավարտվում են մի դեպքում բարձր, դուրս թեքվող վզով (աղ. II, նկ. 5), մյուսում՝ դուրս փոված շուրթեր ունեցող ցածր վզիկով (աղ. II, նկ. 6)։

ՍԱՓՈՐՆԵՐ — Ներկայացված են երկու օրինակով։ Դրանցից մեկը սև, թեթևակի փայլեցրած, բարձր ուղիղ վզով, երկկոնաձև իրանով անոթ է, որի հատակը հարթ է, իսկ իրանի վերին մասից շրթին է միանում կտրվածքում ուղղանկյուն տեսք ունեցող աղեղնաձև կանթը։ Իրանի վերին մասում արված են երեքական փորագիր զարդագծեր (աղ. II, նկ. 7)։ Մյուսը, պատրաստված ձեռքով, բաց շագանակագույն է, ունի բարձր, տակառաձև իրան և դուրս թեքվող, թեթևակի փոված շուրթով ավարտվող ուղիղ վզիկ։ Շուրթից իրանի կենտրոնին է միանում աղեղնաձև կանթը (աղ. II, նկ. 8)։

ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ԱՆՈԹՆԵՐ.— Ներկայացված են սափորիկներով ու գավաթաձև ամանիկներով։ Իրենց հերթին դրանք բաժանվում են մի քանի տարբերակի։ Այսպես, սափորիկների առաջին տարբերակին պատկանողները լայն, բարձր վզով և թեթևակի դուրս թեքված շուրթով գորշ կամ սև գույնի անփայլ անոթներ են։ Դրանցից մի մասի իրանը գնդաձև է, մյուսներինը՝ համեմատաբար ձգված։ Հայտնաբերված են 11 օրինակով, իրանի կենտրոնում կիսագնդաձև կանթեր ունեն (աղ. II, նկ. 9—14)։ Սրանց թվին ենք դասում ևս մեկ սափորիկ, որը նախորդներից տարբերվում է սոսկ կանթի բացակայությամբ։ Երկրորդ տարբերակին են պատկանում 10 փոքրիկ անոթներ, որ նույնպես պատրաստված լինելով դուրգի վրա, նախորդներից տարբերվում են վզիկների նեղությամբ և աղեղնաձև կանթերով, որոնք սկսվելով շուրթի տակից, միանում են իրանի կենտրոնական մասին (աղ. II, նկ. 15, 16)։ Երրորդ տարբերակում պայմանականորեն դասում ենք երկու անոթ։ Դրանցից մեկն ունի բարձր, թույլ ռելիեֆ զարդագոտիներով ուղիղ վզիկ, որի դուրս փոված շրթին ներսից ամրացված է տափակ, կիսակլոր, կենտրոնում փոքրիկ անցք ունեցող կանթը (աղ. II, նկ. 17)։ Անոթներից մյուսը տակառաձև է և վերը նկարագրված սափորից (նկ. 8) տարբերվում է կանթի բացակայությամբ (աղ. II, նկ. 18)։

Խոշոր խումբ են կազմում (11 օրինակ) և դավաթաձև անոթները, որոնք նույնպես պատրաստված են դուրգով։ Սրանք ունեն թեթևակի դուրս փոված շուրթ և փոքրիկ կիսագնդաձև իրան, որն ավարտվում է հարթ հատակով։ Իրանի կենտրոնում փակցված են կիսագնդաձև կանթեր (աղ. II, նկ. 19—20)։

Գավաթների երկրորդ տարբերակին ենք դասում երկու անոթ։ Դրանցից մեկը իրանի վերին մասում զարդարված է ռելիեֆ ծալքագոտիներով, իսկ ուղիղ վզիկ իրանին է միանում աղեղնաձև կանթը (աղ. II, նկ. 21)։ Մյուսը սրանից տարբերվում է գույգ կանթով և զարդագոտիների բացակայությամբ (աղ. II, նկ. 22)։ Նախորդի պես սա ևս պատրաստված է դուրգով և ունի թեթևակի փայլեցրած սև գույն։

Փոքրածավալ անոթներից վերջինը ձեռքով պատրաստված, մրածածկ, կոպիտ ամանիկ է,

որի տակառաձև իրանը, նստած լինելով հարթ հատակի վրա, ավարտվում է դուրս թեքված շուրթեր ունեցող փոքրիկ վզիկով (աղ. II, նկ. 23)։

ՔՐԵՂԱՆՆԵՐ.— Ներկայացված են 12 օրինակով և բաժանվում են մի քանի տարբերակի։ Առաջին տարբերակին պատկանողները (երկու հատ) փոքրիկ վզիկով խոր անոթներ են, որոնք ներսից և արտաքինից զարդարված են փայլեցման եղանակով արված ուղղահայաց զարդագծերով։ Իրանի վերին մասում արված են լայն, փոքրիկ կանթեր (աղ. II, նկ. 24)։ Երկրորդ տարբերակը նախորդից դանազանվում է բարձր ուղիղ վզով, որը զուրկ է շուրթից։ Իրանը վերին մասում զարդարված է ռելիեֆ զարդագոտիներով, իսկ ներքևում այն ունի փայլեցմամբ արված ուղղահայաց զարդագծեր։ Վզի հիմքից իրանի կենտրոնական մասն է իջնում փոքրիկ, լայն կանթը (աղ. II, նկ. 25)։ Երրորդ տարբերակին (3 օրինակ) բնորոշ է վզից անմիջապես թեքվող իրանը (աղ. III, նկ. 1)։ Չորրորդ տարբերակին պատկանողները (չորս օրինակ) ցածրիրան են և ունեն դուրս փոված շուրթեր։ Կլորացող իրանների կենտրոնական մասում ամրացված են փոքրիկ կանթեր (աղ. III, նկ. 2—4)։ Հինգերորդ տարբերակն ունի փոված բերան, փոքրիկ վզիկ և ցածր, կտրուկ նեղացող իրան, որի վերին մասում ամրացված է փոքրիկ կանթը (աղ. III, նկ. 5)։ Վերջին կավանոթը թեթև փայլեցրած, սև գույնի եռոտանի թաս է, որի շուրթի տակ փոքրիկ բռնակ է ամրացված։ Իրանը զարդարված է փայլեցմամբ արված ուղղահայաց զարդագծերով (աղ. III, նկ. 6)։

Վերոհիշյալ իրերից բացի դամբարանի արևվելյան մասում հայտնաբերվեցին սարդիոնե կլոր և բրոնզե թիթեղից պատրաստված գլանաձև ուլունքներ (աղ. III, նկ. 7—8)։ Վերջին իրը, որը հայտնաբերվեց կմախքի մոտից՝ բրոնզե լարից պատրաստված պարուրաձևար մատանին էր (աղ. III, նկ. 9)։ Պեղածոների վերջին խումբը ներկայացված է թռչունների և տարբեր կենդանիների ոսկորներով։

Նկարագրված առարկաներից ամենևին չեն տարբերվում նշված դամբարանադաշտից մոտ մեկ կիլոմետր արևելք՝ «Մաճ» կոչվող վայրում պատահականորեն բացված դամբարանի նյութերը[3]։ Ըստ Վարշամ և Գրիգոր Գևորգյանների վկայության, այդ դամբարանից հայտնաբերվել էին սկահակ, հինգ այլ խեցանոթներ և բրոնզե մեկ ճակատակալ։ Սկահակը ձևով և գույնով կրկնում է վերը նկարագրվածներից երկրորդին, տարբերվելով սոսկ փոքրագիր գծազարդերի բացակայությամբ (աղ. III, նկ. 10)։ Նույն նմանությունն է նկատվում և մյուս խեցանոթների ուսումնասիրության ընթացքում։ Դրանցից երեքը փոքրիկ կճուճներ են և ձևով կրկնում են նախորդ դամբարանի երկրորդ տարբերակը։ Սակայն սրանց իրանը փոքր-ինչ ուռուցիկ և ցածր է, ունի կարմրա-դարնագույն երանգ (աղ. III, նկ. 11)։ Ինչ վերաբերում է մյուս երկու կավանոթներին, ապա դրանցից մեկը թեթև փայլեցրած, սև գույնի բրեղան է (աղ. III, նկ. 12), որ ամենևին չի զանազանվում բրեղանների չորրորդ տարբերակից։ Նույնը պետք է ասել և վերջին խեցանոթի մասին, որը գորշ գույնի անփայլ սափոր է (աղ. III, նկ. 13) և վերը նկարագրվածից տարբերվում է սոսկ փոքրագիր զարդագծերի և կանթի բացակայությամբ (հմմտ. աղ. II, նկ. 7)։ Հայտնաբերված նյութերից առանձին հետաքրքրություն է ներկայացնում ճակատակալը, որը կենտրոնական մասում ձվաձիր տեսք ունի, ծայրերում աստիճանաբար նեղանում և ավարտվում է կապիչի փոքրիկ օղակներով։ Ճակատակալի կենտրոնական մասում բացված անցքերից դատելով այն ամրացվել է կաշվից պատրաստված տակդիրի վրա։ Իրն ամբողջությամբ զարդարված է դրվագման եղանակով կատարված երկրաչափական զարդերով (7-ական կետից կազմված 10 շրջաններ, եռանկյուններ, կամարներ և այլն), որոնք հավանաբար կապված են երկնային լուսատուների պաշտամունքի հետ (աղ. III, նկ. 14)։

Անդրադառնալով հայտնաբերված նյութերի թվագրությանը, նշենք, որ դրանք իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն ինչպես Զանգեզուրի (Դավիթ-բեկ, Քաջարան, Լծեն, Շիկահող և այլն), այնպես էլ Հայաստանի ու Ադրբեջանի բազմաթիվ վայրերում պեղված մ. թ. ա. II հազ. վերջով և I հազ. սկզբով թվագրվող հուշարձաններում (Կարմիր-բլուր, Ծիծեռնակաբերդ, Թաքիա, Լոռի-բերդ, Մինգեչաուր, Ախմախի և այլն)[4], որը և թույլ է տալիս տանձա-

3 Ղափանի երկրագիտական թանգարան, գույք №№ 486/132, 487/163, 488/164, 489/165, 490/166, 491/162, 492/168։

4 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 136—153, նկ. 56, 60, 61, աղ. XV; Նույնի՝ Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 58—59, նկ. 20, 26а; С. А. Есаян, А. А. Шагинян, Археологические находки в Зангезуре, СА, 1969, № 3, էջ 199—202; К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, 1957, էջ 150—151, նկ. 15; Г. И. Нонне, Сосуды-сапожки Мингечаура, «Ма-



ԱՂՅՈՒՍԱԿ I



ԱՂՅՈՒՍԱԿ II



ԱՂՅՈՒՍԱԿ III



ԱՂՅՈՒՍԱԿ IV

վերյան նյութերը տեղադրել ժամանակագրական նույն շրջանակներում։ Նկատենք, սակայն, որ գանգեգուրյան նյութերը զգալի ընդհանրություններ ունենալով թվարկված հուշարձանների հետ, աչքի են ընկնում և որոշակի առանձնահատկություններով։

Զանգեզուրյան մշակույթի զարգացման հետագա փուլն են արտացոլում Նիկահող գյուղի «Սպիտակ հողեր» կոչվող վայրից հայտնաբերված նյութերը։ Նախքան պեղումները, դպրոցականների կողմից այստեղ բացվել էին 13 քարարկղային դամբարաններ։ Դրանցից մեկի (չափերն են՝ 110×60×60 սմ, ուղղությունը՝ արևելքից-արևմուտք) լրացուցիչ պեղումների ընթացքում հայտնաբերվեցին բաց շագանակագույն, փայլեցրած անոթի բեկորներ։ Մասնակի վերականգնումից հետո պարզվեց, որ դա հարթ հատակով, թեթևակի ներս թեքված շուրթով և իրանի վերին մասում հորիզոնական գույգ փորագիր գծազարդեր ունեցող քրեղան է (աղ. III, նկ. 15)։ Հետագայում այս դամբարանից հայտնաբերվել էին ևս երկու սափորներ (գտնվում են Նիկահողի դպրոցում)։ Դրանցից մեկը հարթ հատակով, գնդաձև իրանով, ծնկաձև կանթին խոյագլուխ զարդ ունեցող անոթ է, որի փողաձև լայնացող վիզը վերին մասում տնի ուլիկֆ գծազարդեր։ Անոթի իրանի վերին մասում կան երկշար խաչաձև փորագիր նախշեր։ Այս զարդախումբը լրացվում է հընգաթև աստղի սանրատամ պատկերով, որը շրջափակում է անոթի վերին մասը (աղ. III, նկ. 16)։ Մյուս սափորի իրանը ավելի ձգված է, իսկ լայն ու բարձր վզի վերին մասից իրանի ուսին է միանում ադեղնաձև կանթը (աղ. III, նկ. 17)։ Վերը նկարագրված քրեղանից ոչնչով չեն տարբերվում գյուղով հոսող, Քյուդին գետակի ափից պատահականորեն հայտնաբերված քրեղանի բեկորները (աղ. III, նկ. 18)։ Նկարագրված նյութերն իրենց անալոգիաներն ունեն 1971 թ. գյուղի հին դպրոցի բակում բացված դամբարանի նյութերի մեջ[5], որը և թույլ է տալիս այս նյութերը թվագրել մ. թ. ա. VIII—VII դարերով։ Հարկ է նկատել, որ կենդանակերպ կանթերով անոթներ հայտնի են և Իրանական Ադրբեջանում[6]։ Վերջիններս ուղեկցվում են կենդանակերպ անոթներով, որոնք այնքան հաճախ են հանդիպում Թալիշի և Ղափանի համաժամանակյա հուշարձաններում։ Նշված զուգահեռները ցույց են տալիս, որ մ. թ. ա. I հազ. սկզբին Ղափանի շրջանը մշակութային կապեր է ունեցել Թալիշ-Իրանական աշխարհի հետ։

Կառուցվածքով և ուղղվածությամբ (արևելքից-արևմուտք) այս դամբարանից չէր տարբերվում «Սպիտակ հողերից» մոտ 700 մ արևմուտք գտնվող «Կապեն արտ» կոչվող վայրում բացված (չափերն են՝ 190×60×80 սմ)։ Կմախքը, որը պատկանում է երկարագանգ տղամարդու, պառկեցված էր դամբարանի կենտրոնական մասում աջ կողքի վրա, դեմքով դեպի հյուսիս, ոտքերով՝ արևմուտք։ Գանգի վրա հայտնաբերվեցին բրոնզե թերթիկներից պատրաստված գլանաձև մի բանի ուլունքներ (աղ. IV, նկ. 10), իսկ վզոսկրների վրա՝ երեք բրոնզե խոշոր ձուլածո զանգվածեղ մանյակներ։ Վերջիններիս ծայրերը իրարից հեռացված են, ունեն օղակաձև փաթույթներ (աղ. IV, նկ. 5)։ Աջ ձեռքի ոսկորների վրա գտնվեցին բրոնզե չորս ապարանջաններ, որոնք ունեն կլոր կտրվածք (աղ. IV, նկ. 6)։ Դամբարանի հարավային պատի տակ, անմիջապես կմախքի գոտեմասի ետևում հայտնաբերվեց ամբողջական բրոնզե թիթեղից պատրաստված գոտի, որին լրացուցիչ ամրություն է տրված բրոնզե փոքրիկ գամերով դուրգամված երեք նուրբ թիթեղիկներով։ Գոտու լայն, կլորացող ծայրերից մեկը կենտրոնական մասում ունի բրոնզե կեռ, իսկ հակադիր ծայրին դուրգամված բրոնզե թերթիկը ավարտվում է կիսաշրջանաձև ճարմանդով (աղ. IV, նկ. 4)։ Գոտու միջով անց է կացված երկար երկաթե դաշույնը, որը հեռավոր կերպով հիշեցնում է դաշույնների «սևանյան» տեսակը (աղ. IV, նկ. 8)։ Դաշույնի և գոտու տակ հայտնաբերվեց դուրգի վրա պատրաստված կարմիր գույնի, կոկված, անփայլ մակերեսով, գնդաձև իրանով և բարձր դուրս թեքված վզիկով միականթ գավաթ։ Կանթը զարդարված էր ատամնաձև հանվածքներով (աղ. IV, նկ. 3)։ Կմախքի ծնկների և ձեռքերի միջև հայտնաբերվեց բրոնզե պատյանով մեկ այլ երկաթե դաշույն։ Վերջինիս պատյանը երկու կողմից զարդարված էր փորագրման եղանակով արված զարդանախշերով։ Սկսվելով ետին մասում հեռացող եզրեր ունեցող պատյանի հիմքից, այդ կետազարդերը միաձուլվում են առջևում։ Դրանց տակից, պատյանի ողջ լայնությամբ արված են չորս հորիզոնական զարդագծեր, որոնցից ներքև փորագրված են զույգ գծերով հրեք կամարաձև պատկերներ, որ արտաքինից շրջափակված են կետազարդերով։ Հորիզոնական գծազարդեր են արված և պատյանի կենտրոնական մասում։

терциальная культура Азербайджана, т. II, Баку, 1949.

5 О. Խնկիկյան, Հետախուզական պեղումներ Ղափանի շրջանում (1970—1971 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 238—239, աղ. II։

6 «Կուրյեր», 1971, № 10, էջ 10—24։

Դրանց ներքևով անցնում են կետերով լցված կամարաձև զարդեր (աղ. IV, նկ. 7)։ Այս դաշույնի կողքին, անմիջապես կրծքավանդակի մոտ հայտնաբերվեց թերթ բրոնզից պատրաստված տափակ կրծքազարդ, որն ունենալով եղևնու տեսք, հավանաբար կապվում է կենաց ծառի գաղափարի հետ։ Զարդը ստորին մասում ունի կլորացող պոչուկ, իսկ գագաթի ճյուղավորված ծայրերը իրար են միտնում (աղ. IV, նկ. 11)։ Նմանօրինակ կրծքազարդ է հայտնաբերված և Լափանի Թեղուտ թաղամասից (աղ. IV, նկ. 12)։ Դամբարանի հարավ-արևելյան կողմում հայտնաբերվեց երկաթե խողովակաձև նիզակ (աղ. IV, նկ. 9)։ Վերջինիս մոտ սփռված էին դուրգով պատրաստված, չկոկված մակերեսով, կարմիր դույնի անփայլ, խոշոր անոթի բեկորներ։ Մասնակի վերականգնումից հետո պարզվեց, որ դրանք միջին չափի, իրանի կենտրոնական մասում մեկ կանթ ունեցող կարասի բեկորներ են։ Կարասի դուրս թեքված վիզը ավարտվում է փորագիր հատիկաձևերդեր ունեցող թեթևակի փռված շուրթով (աղ. IV, նկ. 2)։ Կարասի կողքին հայտնաբերվեց նույն գույնն ու պատրաստման եղանակն ունեցող մի խոշոր սկահակ։ Վերջինիս կոնաձև ոտքը սնամեջ է և բարձր վզի վրա է պահում սկահակի գնդաձև, դուրս թեքվող վզիկ ունեցող իրանը, որի կենտրոնական մասի հակադիր ծայրերին կպցված է երկու աղեղնաձև կանթ։ Վզի հիմնամասով անցնում է ալիքաձև փորագիր գիծ, որը երկու կողմից նրիզված է փորագիր հատիկազարդերով։ Անոթն իրանի վերին մասում ունի խոյագլուխ նախշ, կենտրոնական մասը հարդարված է զույգ փորագիր զարդագծերից կազմված և նրանց միջև ընկած տարածությունը հատիկազարդերով լցված կամարաձև պատկերներով (աղ. IV, նկ. 1)։ Ամենայն հավանականությամբ սկահակը ունեցել է պաշտամունքային նշանակություն։ Թերևս այդ են վկայում նրա կենդանական ու բուսական զարդամոտիվները։

Թվագրման համար առանձին նշանակություն ունեն մետաղե իրերը. նիզակը, ապարանջանները ու վզի ձույլ մանյակները իրենց նմանօրինակներն ունեն Խրտանոցում, Լենինականում, Մակարաշենում, Կուրթանում և մ. թ. ա. VII—VI դարերով թվագրվող այլ հուշարձաններում։ Այդ է վկայում և դաշույնի բրոնզե պատյանը, որի նմանակը, բրոնզե ապարանջանների, նկարագրված նիզակատեսակների, վզի բրոնզե մանյակների և մ. թ. ա. VII—VI դդ. պատկանող այլևայլ իրերի հետ հայտնաբերվել է Ակներում Թաքայշվիլու կողմից։ Տրված թվագրությունը հաստատվում է մյուս նյութերի համեմատական ուսումնասիրության միջոցով։ Դրանցից գավաթը իր նմանակն ունի Կարճաղբյուր գյուղի դամբարաններից մեկում (դաշտային № 28) պեղված իրերի կոմպլեքսում։ Վերջինս հայտնաբերված է վերը նկարագրված նիզակի, երկաթե դաշույնի, մանգաղաձև դանակների, սկյութական ակինակի ու նետասլաքների հետ, որոնք ուրարտական հուշարձաններում հաճախ են հանդիպում և կայուն կերպով թվագրվում են մ. թ. ա. VII—VI դարերով։ Ինչ վերաբերում է եղևնաձև կրծքազարդին, ապա որքանով մեզ հայտնի է, այն առայժմ իր զուգահեռները չունի։ Տրված թվագրության օգտին են խոսում և 1970 թ. Բաղաբուրջից հայտնաբերված վաղ հայկական ժամանակաշրջանին պատկանող նյութերը։ Ներկայացված լինելով տարատեսակ խեցանոթներով, դրանք պատրաստման եղանակով փաստորեն կրկնում են վերը նկարագրված խեցեղենը։ Այս զուգահեռները ցույց են տալիս, որ շիկահողյան կոմպլեքսը տեղադրվում է մ. թ. ա. VII—VI դդ. շրջանակներում։

Օ. ԽՆԿԻԿՅԱՆ

ԱՊԱՐԱՆԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայկական տարազի ատյաս կազմելու պահանջներից ելնելով, անհրաժեշտ է տալ յուրաքանչյուր պատմա-ազգագրական շրջանի տարազի մանրակրկիտ ուսումնասիրություն, համալիրի բաղկացուցիչ մասերի, նյութի, գույնի, ձևվածքի, ծագման, հարատևման, վերացման դրանց տարբերակների վերաբերյալ մանրամասն տվյալները։ Այդ իսկ տեսակետից կարևոր է գոյատևող, տարածված կամ եզակի գործածված զգեստների ուսումնասիրությունը։

Ապարանի շրջանը հայերով վերաբնակեցվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո՝ 1829—1830 թթ. Արևմտյան Հայաստանից տեղափոխված բնակիչներով։ Շրջանում բնակություն են հաստատել հիմնականում Ալաշկերտից, Տուրուբերանից, մասամբ էլ Վասպուրականից գաղթողները։ Այսպես, Արագած, Ափնա, Մուլքի, Հարթավան, Արայի գյուղերում հաստատվել են Ալաշկերտից, իսկ Ջրնաղ, Մելիք, Ծաղկահովիտ, Բուժական, Հայփամբ, Քա-